ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ՆՈՐ ԶՈՎՔ» ՍՊԸ ՄԻՋԵՎ

Սույն համագործակցության հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) կնքվում է «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ Ինստիտուտ) և «Նոր Զովք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև:

Հաշվի առնելով, որ Կողմերն ընդունում են փոխադարձ համագործակցությունը և փորձի փոխանակումը

Նկատի ունենալով, որ համատեղ համագործակցությունը հնարավոր է միայն կառուցողական փոխգործակցության և փոխօգնության կազմակերպմամբ,

Կարևորելով մարքեթինգի և կառավարման պրակտիկ ոլորտում կարողությունների զարգացումը.

Ընդունելով մարքեթինգի և կառավարման ոլորտի տեսության և պրակտիկայի զուտագեռ զարգացմանն ուղղված Կողմերի ջանքերը և պատրաստակամությունը,

Հիմք ընդունելով սույն Հուշագիրը և փոխադարձ պայմանավորվածությունները.

Կողմերը համաձայնեցին հետևյալի շուրջ՝

1. Համագործակցության նպատակը

1.1 Սույն Հուշագրով Կողմերը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

2. Համագործակցության ուղղությունները

2.1 Սույն հուշագրով Կողմերը համագործակցում են.

2.1.1 Ուսանողների պրակտիկաների կազմակերպման միջոցով,

2.1.2 Նորարարական, ծրագրերի համատեղ իրականացման շուրջ,

2.1.3 Սեմինարների, խորհրդակցությունների կազմակերպման միջոցով,

2.1.4 Հետազոտական համատեղ ծրագրերի իրականացման շուրջ, Կողմերի գործունեությանն առնչվող համապատասխան նյութերի հրատարակման գործում,

2.1.5 Լրացուցիչ և շարունակական մասնագիտական կրթական ծրագրերի համատեղ իրականացման շուրջ,

2.1.6 Սույն Հուշագրի գործողության շրջանակներում Կողմերի գործառույթների կատարման համար, ըստ աշխատանքային անհրաժեշտության, տարածքների և գույքի օգտագործման միջոցով,

2.1.7 Համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվություն հայցելու և ստանալու գործում:

2.2 Կողմերն իրականացնում են նաև փոխհամագործակցության համատեղ ծրագրեր:

2.3 Կազմակերպում են միջազգային գիտական կոնֆերանսներ, սեմինարներ, ստեղծագործական բանավեճեր, խորհրդակցություններ:

2.4 Իրականացնում են գիտական, մասնագիտական գրականության, մեթոդական ձեռնարկների, աշխատությունների, պարբերականների և այլ նյութերի փոխանակում:

2.5 Հայցում և ստանում են համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքները և տեղեկատվություն դրանց խոչընդոտող հանգամանքների մասին:

3. Համագործակցության սկզբունքները

3.1 Կողմերը սույն Հուշագրի սահմաններում իրենց գործառույթներն իրականացնում են օրինականության, փոխօգնության, համագործակցության սկզբունքներով:

4. Եզրափակիչ դրութեր

4.1 Սույն Հուշագիրը կնքվում է երկու օրինակից հայերեն լեզվով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4.2 Սույն Հուշագրի լրացումներն ու փոփոխությունները համարվում են Հուշագրի անբաժանելի մասը:

4.3 Սույն Հուշագիրը չի առաջացնում ֆինանսական պարտավորություններ Կողմերի համար:

4.4 Յուրաքանչյուր կողմ կարող է միակողմանիորեն լուծել (դադարեցնել) Հուշագրի գործողությունը՝ այդ մասին մեկ ամիս առաջ տեղյակ պահելով մյուս կողմին:

4.5 Սույն հուշագիրը կնքվել է Երևան քաղաքում, 2023 թ. փետրվարի 8-ին:

4.6 Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում անժամկետ:

5" Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ ք. Երևան, Ալեք Մանուկյան 11	«Նոր Զովք» ՍՊԸ ք. Երևան, Հանրապետության 71
Ռեկտոր՝ Դավիթ Խիթարյան	Տնօրեն՝ Ռ. Ալիխանով
Կ.Տ.	Կ.Տ.